DOI: 10.61760/18290108-trh.25.4-69

ՌԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲԱՆԱԿԻ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ*

Հ. Կ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, մանկավարժական գիտությունների թեկնածու, մանկավարժության ամբիոնի դոցենտ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի խորհրդական

Ներածություն

Աշխարհում ակտիվ տեմպերով ընթացող գիտատեխնիկական զարգացումը ոչ միայն նպաստում է մարդկային հասարակության կենսագործունեության բոլոր բնագավառներում, հատկապես՝ ռազմական ոլորտում, մշտական թռիչքաձև առաջընթացին, այլև այդ առաջընթացով պայմանավորված տարաբնույթ սպառնալիքների ու մարտահրավերների ծագմանը: Այդ պատճառով էլ հրամայական են դառնում ռազմական անվտանգության ապահովման համակարգի անընդհատ արդիականացումն ու կատարելագործումը: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ու պաշտպանության բնագավառում ներդրումը, մի կողմից, հեշտացնում են հրամանատարների գործը տեղեկույթի հսկայական հոսքերի գերարագ մշակման, բազմոլորտ մարտական գործողությունների վարման ու կառավարման, հատկապես՝ որոշումների ընդունման ասպարեզում, մյուս կողմից՝ ստեղծում են էական բարդություններ պատասխանատվության, էթիկայի, կռահողականության, մոլորեցման առումով:

Մշտական արդիականացման ու կատարելագործման հետ մեկտեղ հաճախ ձեռնարկվում են պաշտպանական ոլորտի համապարփակ փոփոխություններ, որոնց ժամանակ կատարվում է ամբողջ ռազմական շինարարության կամ դրա առանձին ոլորտի, ԶՈՒ-ի կամ դրա առանձին տեսակների արժեհամակարգային փոփոխություն, ռազմատեխնիկական քաղաքականության ու ռազմական արդյունաբերության կատարելագործում ու զարգացում և այլն, այսինքն՝ պետության պաշտպանական համակարգը և, հատկապես, դրա հիմքը՝ Զինված ուժերը, վերափոխվում են ըստ նոր տեսլականի: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ է եղել նման կերպափոխման[1]: Դրա արդյունքը պետք է լինի բոլոր ոլորտներում

* Հոդվածն ստացվել է 23.07.2025: Հոդվածի գրախոսությունն ստացվել է 21.10.2025:

[1] Տես «Բանակի կերպափոխման հայեցակարգ (հիմնական ուղենիշները)»: ՀՀ պաշտպանության նախարարություն (https://mil.am/files/lib1/Հայաստանի Հանրապետության Բանակի կերպափոխման հայեցակարգը.pdf):

արդիականացած, ժամանակի և ապագայի պահանջներին համապատասխանող բանակի ստեղծումը:

Պաշտպանական (ռազմական) վերափոխում են կոչվում պետության ռազմական կազմակերպության հեռամետ (արմատական) փոփոխությունները, որոնք նպատակաուղղված են այդ կազմակերպությունը համապատասխանեցնելու միջազգային անվտանգային միջավայրի ու պետության ներսում և հասարակության շրջանում կատարվող քաղաքական, տնտեսական, սոցիալական, ռազմատեխնիկական փոփոխություններին և, որպես կանոն, պետական իշխանության բարձրագույն մարմինների ձեռնարկած ծավալուն վերափոխումների մաս են: Այն անմիջականորեն արտահայտվում է ԶՈՒ-ի, մյուս պաշտպանական և անվտանգային կազմակերպությունների վերասպառազինման ու վերակազմակերպման, զորքերի կազմավորման համակարգի փոփոխման, զինվորական կադրերի պատրաստման, զորակոչային ընթացակարգերի, զինվորական ծառայության պայմանների, զինվորական անձնակազմի ուսումնավարժեցման և կրթության, զինվորական իրավունքի ու ծառայողական կանոնագրքերի և այլ ենթաոլորտների կատարելագործման ձևով[2]:

Ռազմական վերափոխումների անհրաժեշտություն սովորաբար ծագում է այն դեպքում, երբ պետության պաշտպանական համակարգը այլևս չի համապատասխանում ռազմական սպառնալիքների բնույթին ու մասշտաբներին, պետության հնարավորություններին (առաջին հերթին՝ տնտեսական), պետության ու հասարակության բուն էությանը[3]: Որպես կանոն ռազմական վերափոխումը պայմանավորված է լինում օբյեկտիվ հանգամանքներով, ինչպիսիք են՝ պատերազմում հաղթանակը կամ պարտությունը, պետության հասարակական-քաղաքական կարգերի արմատական կերպափոխումները կամ միջազգային ասպարեզում նրա դիրքի (կարգավիճակի) փոփոխությունը, որակապես նոր տեսակի զենքերի ստեղծումը, տնտեսական պայմանների (արտադրության մակարդակի) փոփոխությունը, զինված պայքարի ձևերի ու եղանակների արդիականացումը և այլն[4]:

---

[2] Տես “15-main (1)”, Part II. NATO, 7 June 2001, P. 68 (https://www.nato.int/docu/glossary/eng/15-main.pdf):

[3] Տես, օրինակ, *Л. Г. Ивашов.* Военная реформа в современной России: состояние и перспективы. «Политика и правовое государство», 2006, № 2 (https://cyberleninka.ru/article/n/voennaya-reforma-v-sovremennoy-rossii-sostoyanie-i-perspektivy/viewer):

[4] Տես «Военный энциклопедический словарь», т. II. М., 2001, с. 470; նաև՝ *David R. Warren*. Defense Management: Challenges Facing DOD in Implementing Defense Reform Initiatives. US General Accounting Office, 13 March 1998 (https://www.govinfo.gov/content/pkg/GAOREPORTS-T-NSIAD-AIMD-98-122/pdf/GAOREPORTS-T-NSIAD-AIMD-98-122.pdf); *James Carafano.* Defense Reform by the Numbers: Four Crucial Priorities for the Next Administration. 23 March 2015 (https://www.heritage.org/defense/report/defense-reform-the-numbers-four-crucial-priorities-the-next-administration):

1. Կերպափոխման արդյունավետությունն ապահովելու համար միջավայրի նախապատրաստման անհրաժեշտությունը

ՀՀ-ում վերը հիշատակված կերպափոխման իրագործման կազմակերպական փուլում, մեր կարծիքով, նպատակահարմար կլիներ ուսումնասիրել և հաշվի առնել նաև ԶՈՒ-ի նախորդ բարեփոխումների փորձը: Այսպես. «Բանակի կերպափոխման հայեցակարգում» կան դրույթներ՝ զետեղված «Փոփոխությունների հիմնական թիրախը» բաժնում, որոնք, կարծես, հուշում են մի շարք ձեռնարկումներ, որոնք կնպաստեն կերպափոխման հաջող ընթացքին: Մասնավորապես նշվում է.

– «զինծառայողների կրթական, մասնագիտական գիտելիքների և կիրառական հմտությունների, ֆիզիկական պատրաստվածության բարձր մակարդակի ապահովումը և համապատասխանեցումը ժամանակակից ռազմական գիտության, կրթության և պատրաստության պահանջներին,
– ռազմավարական, օպերատիվ և մարտավարական օղակներում հրամանատարական պատրաստության և հրամանատարական գործառույթների իրականացման չափորոշիչների, ղեկավարման ու կառավարման սկզբունքների համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին»[5]:

Այս վերափոխումը հասարակ բարեփոխում չէ, քանի որ նպատակաուղղված է ոչ թե եղածի կատարելագործմանը, այլ միանգամայն նոր կերպարանքի[*] ստեղծմանը, որում նոր կլինեն և՝ մարդիկ՝ իրենց հոգևոր-մտածողական հատկություններով ու կերպարով, և՝ նրանց հիմնարար գործառույթները, և՝ նրանց փոխհարաբերություններն ու դրանց ձևավորման միջավայրի հիմնական բնութագրիչները, և՝ գործունեության բնույթը, մեթոդներն ու եղանակները, և՝ այդ ամենի գնահատման չափանիշները: Այսինքն՝ ամբողջ պաշտպանական համակարգը արմատապես կերպափոխվելու է նպատակային ու հենքային վերափոխումների միջոցով:

Ցանկացած վերափոխման հաջողություն մեծապես պայմանավորված է հասարակությունում և հատկապես այն միջավայրում, որին վերաբերում է տվյալ վերափոխումը, դրա անհրաժեշտության, նպատակների, իրագործ-

[5] «Բանակի կերպափոխման հայեցակարգ (հիմնական ուղենիշները)», «VI. Փոփոխությունների հիմնական թիրախները»:

[*] Զինված ուժերի կերպարանքը *(облик ВС; Armed Forces image)* «Զորքի առկա ճշգրիտ կարգավիճակը, առաքելության նպատակը, հետագա առաքելությունները, առաքելության գերակայությունը և պատրաստվածությունը, այն է՝ այն պարամետրերի համախումբը, որոնք բնութագրում են ԶՈՒ-ի նախանշանակումը, քանակական–որակական կազմն ու կառուցվածքի, զորահավաքային ռեսուրսների պատրաստման ու կուտակման վիճակը, զինվորական ծառայության ու կադրերի պատրաստման կազմակերպվածքը» (տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 196):

ման եղանակների ու մեխանիզմների ընբռնման մակարդակով[6]: Օրինակ՝ Հարավային Կորեայի «Ազգային պաշտպանական վերափոխման ակտ» ղեկավար փաստաթղթով որպես Կառավարության հիմնարար պարտականություն նշվում է, որ «Կառավարությունը պետք է զարգացնի ենթակառուցվածք ու միջավայր ազգային պաշտպանական վերափոխումը շարունակաբար և հետևողականորեն առաջ մղելու համար»[7]: Իսկ եթե նման ըմբռնումը և դրա շնորհիվ սպայական կազմի դրական շարժառիթավորումը ապահովված չեն, ապա տվյալ վերափոխումը մեծ հավանականությամբ դատապարտված կլինի անհաջողության, ինչպես եղավ Ռուսաստանում 1860-ական թվականներին Միլյուտինի ձեռնարկած ռազմական վերափոխումների դեպքում[8]:

Հարկ է նաև նշել, որ հնարավոր չէ 10-15 տարվա կտրվածքով իրագործել ռազմավարական վերափոխումներն՝ ըստ մեկ նախնական ծրագրի՝ առանց դրանում ճշտումներ կատարելու և իրագործման ընթացքը վերահսկելու: Այդ նպատակով պարբերաբար կատարվում է վերափոխումների ընթացիկ արդյունքների դիտարկում, որը կոչվում է «Պաշտպանության ռազմավարական վերանայում» *(Strategic Defence Review, Стратегический пересмотр обороны)*[9]:

Դրա գործնական իմաստն այն է, որ՝

- կատարվի պլանային և իրական գործընթացի ժամանակացույցների համեմատություն՝ համապատասխան շտկումներով,
- գնահատվեն առկա և սպասվելիք ռազմական-անվտանգային սպառնալիքները և ըստ այդմ պլանում կատարվեն ճշգրտումներ:

Այլ կերպ ասած՝ պաշտպանության ռազմավարական վերանայումը հնարավորություն է տալիս որոշելու պաշտպանական համակարգի անհրաժեշտ կերպարանքը՝ այն հարմարեցնելով ինչպես այսօր գոյություն ունեցող, այնպես էլ ապագայում կանխատեսվող մարտահրավերների և սպառնալիքների հետմղման պահանջին ու, միևնույն ժամանակ, ունեցած կարողություններին ու ռեսուրսներին, և հստակորեն պլանավորելու նախանշված նպատակին հասնելու համար եղած կարողությունների ու ռեսուրսների օգտագործման օպտիմալ եղանակները[10]: Ընդսմին այս նոր եղանակները, կամ մոտեցումնե-

[6] Տես *Klas Marklund, Karlis Neretnieks*. Military Reform: Practice and Lessons. Conference Report. “Institute for Security and Development Policy’s Asia Program”, 2009 (https://www.isdp.eu//wp-content/uploads/publications/2009_marklund-neretnieks_military-reform.pdf):

[7] Տես “National Defense Reform Act”. Statutes of the Republic of Korea. Article 4, 13 December 2022 (https://elaw.klri.re.kr/eng_mobile/viewer.do?hseq=61721&type=part&key=13):

[8] Տես, օրինակ, *А. П. Шевырев, С. С. Юдин*. Военные реформы и модернизация Русской армии: достижения и неудачи. «Клио», 2024, № 11 (215) (https://cyberleninka.ru/article/n/voennye-reformy-i-modernizatsiya-russkoy-armii-dostizheniya-i-neudachi/viewer):

[9] Այդ մասին հանգամանորեն տես «Հայկական բանակ», 2015, հմ. 3, էջ 9–76 (https:// razmavaraget.wordpress.com/wp-content/uploads/2015/11/pdf-hb-n3-2015.pdf):

[10] Տես *Jennifer M. Taylor, Emily Boggs*. Strategic Defense Review: Procedures, Frameworks, and Tools to Enhance Future Defense Institution Building Projects. Center for Strategic and International Studies, September 2011:

րը, կարող են չհամապատասխանել նախորդ կամ ընդհանրապես ավանդական մոտեցումներին, ինչը, իհարկե, կարող է դեմ տրամադրել սպաների մի զգալի մասին: Ուստի բանակին պետք կլինեն լայնախոհ, շրջահայաց, նորաբար սպաներ, որոնք կկարողանան իրենց մտահորիզոնում հաղթահարել նորի նկատմամբ մարդուն բնորոշ զգուշավորությունն ու կասկածամտությունը, անսովորը չընդունելու նախատրամադրվածությունը, հետևաբար և դրան հակադրվածությունը:

Իսկ դա նշանակում է, որ սպան պետք է այնպես կրթվի ու դաստիարակվի, որ ունենա ոչ միայն նոր գիտելիք յուրացնելու անհագ պահանջմունք, այլև նույն կերպ դաստիարակի իր ենթականերին: Ուրեմն և նա պետք է օժտված լինի առաջավարի հատկություններով, ռազմավարական մտածողությամբ, ձեռնհասությամբ (կոմպետենցիայով), հանրության այլ անդամների՝ վերադաս հրամանատարների, գործընկերների և, հատկապես, ենթակաների հետ առողջ սոցիալական հարաբերություններ ստեղծելու կարողությամբ, նախաձեռնողականությամբ, առանց իր «Ես»-ը կորցնելու հարմարվողականությամբ, վճռականությամբ, պատասխանատվության զգացումով, հուզական բանականությամբ ու կայունությամբ, ենթականերին շարժառիթավորելու և ոգեշնչելու ունակությամբ, մանկավարժի հմտություններով, ազնվությամբ ու պատվախնդրությամբ, իր ծառայության ու ծառայակիցների նկատմամբ պահանջկոտությամբ, քաջությամբ և արիությամբ, զինվորական կանոնադրությունների պահանջների լավ իմացությամբ, կարգասիրությամբ և այլ դրական անձնային որակներով[11]:

Պարզ է, որ սպաներին այսքան տարաբնույթ գիտելիքներով հարստացնելու և անձնային հատկություններ ձևավորելու համար պահանջվում է տարբեր գիտաճյուղերի և ուսումնական առարկաների խելամիտ համակցություն: Սակայն, հաշվի առնելով սոցիալական հարաբերություններ և մասնագիտական ներգործություն ձեռնարկելու սպայի հմտությունների կարևորությունը, այդ շարքում կառանձնացնենք սոցիալական մանկավարժության դերը:

2. Կուրսանտների սոցիալ-մանկավարժական պատրաստման հետազոտական աշխատանքի ուրվագիծը կերպափոխման համատեքստում

Հայաստանի Հանրապետության համար ներկա ռազմաքաղաքական իրավիճակում առաջնային խնդիրներ են անվտանգային միջավայրի ապահովումը, Զինված ուժերի արդիականացումը, վերակազմավորումն ու վերա-

[11] Տես *С. В. Коржев*. Профессионально-личностные качества офицера-руководителя, как основа управления подчиненным воинским коллективом. «Медицина. Социология. Философия. Прикладные исследования», 2021, № 2 (https://cyberleninka.ru/article/n/professionalno-lichnostnye-kachestva-ofitsera-rukovoditelya-kak-osnova-upravleniya-podchinennym-voinskim-kollektivom/viewer); *Neeraj Mahajan*. 10 Qualities of Effective Military Leadership. “Raksha Anirveda”, 2 December 2024 (https://raksha-anirveda.com/10-qualities-of-effective-military-leadership/?srsltid=AfmBOoqZN0Q3JJFNB4CpnSDOy0db_zMwYt_PHMbN3zFCa99pAD9B8VYE):

կառուցումը, կերպափոխումը: Զինված ուժերի զարգացման գործում իրենց առանձնահատուկ տեղն ու դերն ունեն անձնակազմի կրթության, այդ թվում՝ սոցիալ-մանկավարժական պատրաստման, դաստիարակության, բարոյա-հոգեբանական ապահովման բաղադրիչները:

Աշխարհում տեղի ունեցող ռազմական ընդհարումներն ապացուցում են, որ ժամանակակից մարտը, պատերազմը նոր պահանջներ են ներկայացնում զինծառայողին, մասնավորապես՝ սպային, հրամանատարին, զինվորական ստորաբաժանման անձնակազմին, ինչն էլ անպայմանորեն պետք է արտահայտվի նրանց պատրաստման ու վերապատրաստման գործընթացներում: Միայն ռազմական տեխնիկայի, սպառազինության, զենքի արդիականացումը չի կարող ապահովել զինվորական ստորաբաժանումների մշտական բարձր մարտական պատրաստությունը: Կարևորվում են անձնային գործոնը, յուրաքանչյուր զինծառայողի մասնագիտական ու սոցիալ-մանկավարժական պատրաստության մակարդակը:

Այսօր արդեն հրամայական է դարձել ՀՀ ՊՆ ռազմական բուհերի արդիականացման, մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման, պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական և մեթոդական պատրաստվածության մակարդակի, կուրսանտների անձնային աճման ապահովման մեխանիզմների, կարիերայի պլանավորման արդյունավետության մեծացման հիմնահարցերի լուծման համար նպաստավոր միջավայրի ապահովումը: Ռազմագիտական գիտելիքին, կարողություններին, հմտություններին զուգահեռաբար կարևորվում է ապագա սպաների սոցիալ-մանկավարժական պատրաստության պահանջվող մակարդակի ապահովումը[12]: Ռազմական բուհերում դասավանդվող կրթական ծրագրերում դեռ անհրաժեշտություն կա մեծացնելու կուրսանտների՝ որպես ապագա սպաների վերոնշյալ սոցիալ-մանկավարժական, սոցիալ-հոգեբանական ձեռնհասությունների (կոմպետենցիաների) ձևավորման արդյունավետությունը, գործարկելու մասնագիտական-հոգեբանական ընտրազատման մոդելը: Ժամանակակից զինվորական ստորաբաժանումների բարձր աստիճանի մարտական պատրաստության ապահովումն անհնար է առանց ստորաբաժանման հոգեբանական պատրաստման, ստրեսակայունության, համախմբվածության, որոնց հիմնական պատասխանատուն սպա-հրամանատարն է:

Ռազմակրթական հաստատություններում կուրսանտների սոցիալ-մանկավարժական պատրաստման արդիականությունը պայմանավորված է.

- ՀՀ ԶՈՒ-ի բարեփոխումների և արդիականացման արդի փուլում սպա-հրամանատարների պատրաստման որակի բարձրացման անհրաժեշտությամբ,

[12] Տես *Հ. Կ. Թադևոսյան,* Սոցիալական մանկավարժների ինստիտուտի ներդրման և սոցիալ-մանկավարժական գործունեության անհրաժեշտությունը զինվորական կոլեկտիվներում: «Գորիսի պետական համալսարանի միջազգային II գիտաժողովի աշխատանքների ժողովածու»: Գորիս, 2011, էջ 579 - 583:

- պրոֆեսիոնալ բանակի մոդելին անցմամբ,
- ՀՀ ԶՈՒ-ի ստորաբաժանումների կառավարման արդյունավետության մեծացման հրամայականով:

Նշված հրամայականով պայմանավորված՝ անհրաժեշտ է կատարել սպայական ծառայությանը ռազմական բուհի կուրսանտների պատրաստության սոցիալ-մանկավարժական հիմնախնդիրների բացահայտման ու դրանց լուծման ուղիների, մեխանիզմների մշակմանն ուղղված հետազոտական աշխատանքներ:

Մեր կարծիքով՝ նման հետազոտությունների համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1. գիտական մեթոդաբանությամբ կատարել հետազոտություններ ռազմական բուհում սպաների պատրաստման առանձնահատկությունների, առկա խնդիրների բացահայտման ուղղությամբ,
2. ի հայտ բերել սպայական ծառայությանը ռազմական բուհի կուրսանտների պատրաստման հետ առնչվող սոցիալ-մանկավարժական խնդիրները, դրանց հիմնական պատճառները,
3. գիտական ստանդարտացված մեթոդներով և նախագծված կոնկրետ չափանիշներով, ցուցիչներով գնահատել սպայական ծառայությանը ՀՀ ռազմական բուհի կուրսանտների պատրաստության սոցիալ-մանկավարժական բաղադրիչի ապահովման արդյունավետությունը, որակը,
4. մշակել սպայական ծառայությանը ռազմական բուհի կուրսանտների պատրաստման սոցիալ-մանկավարժական խնդիրների համակարգային լուծման ուղիները, մեխանիզմները:

Կուրսանտների սոցիալ-մանկավարժական պատրաստմամբ նախատեսվում է մի շարք կարողունակությունների ձևավորում, որոնք անհրաժեշտ են ապագա սպա-հրամանատարին հետագա ռազմասոցիալական ու դաստիարակչական գործունեության համար: Դրանք են՝ նպատակ սահմանելու, ժամանակը կառավարելու, որոշում կայացնելու, իր և խմբի համար պատասխանատվություն ստանձնելու, անորոշ իրավիճակներում կողմնորոշվելու, հույզերը կառավարելու, անձի վրա հոգեբանական ներգործության ապահովման, խումբը կառավարելու, հաղորդակցման, ինքնաներկայացման, ինքնագնահատման կարողությունները, ստրեսակայունությունը: Այս առումով կարևոր ենք համարում սոցիալ-մանկավարժական գործունեության որակի ապահովման մեխանիզմների, համապատասխան մեթոդիկաների, ցուցիչների մշակումն ու ներդրումը զինված ուժերի ստորաբաժանումներում[13]:

Սպայական ծառայությանը ռազմական բուհի կուրսանտների պատրաստման սոցիալ-մանկավարժական հիմնախնդրի ուսումնասիրությունը, առկա բացթողումների, խնդիրների, դրանց պատճառների բացահայտումը,

[13] Տես *Հ. Կ. Թադևոսյան,* ՀՀ Զինված ուժերի ստորաբաժանումներում սոցիալ-մանկավարժական գործունեության որակի գնահատման մեթոդիկան: «Մանկավարժության արդի խնդիրները: Մարտահրավերներ և լուծումներ»: Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու: Ե., 2015, էջ 118- 123:

սպաների պատրաստման գործընթացի մանկավարժական մեթոդական, սոցիալ-հոգեբանական և նորմատիվ-իրավական բաղադրիչների ուժեղ ու թույլ կողմերի վերլուծությունը կհարստացնեն սոցիալական ու զինվորական մանկավարժության տեսական և գործնական հիմունքները: Կատարված տեսական և հետազոտական աշխատանքների արդյունքների հիման վրա մշակված առաջարկությունները կնպաստեն ռազմական կրթության որակի ապահովման գործում սոցիալ-մանկավարժական ու սոցիալ-հոգեբանական բաղադրիչի ներդրելիության, կիրառելիության, սպայական ծառայությանը կուրսանտների պատրաստության, զինվորական ստորաբաժանումների կառավարման ու ղեկավարման արդյունավետության մեծացմանը:

Ամփոփում

Համակարգային բարեփոխումների համատեքստում ընդգծվում է այն փաստը, որ հիմնական ռազմական կառույցի՝ բանակի կերպափոխման հաջողությունը մեծապես պայմանավորված է այն միջավայրի նպաստավոր վերաբերմունքով, որում և որի միջոցով կատարվում է այդ կերպափոխումը, այսինքն՝ պաշտպանական վերափոխումներում սպայական կազմի գիտակցական ներգրավման աստիճանով: Ընդ որում, սպաները պետք է ոչ միայն ըմբռնեն դրա անհրաժեշտությունը, այլև հանդես գան որպես հանրության՝ վերափոխումների գաղափարները կրող ակտիվ անդամներ, որոնք օժտված լինեն առաջավարի, մանկավարժի, դաստիարակի ունակություններով:

Ինչպես մասնագիտական գիտելիքներով ու հմտություններով այսօրվա կուրսանտներին՝ ապագա սպաներին, օժտելու, այնպես էլ նրանց հոգեկան նորամուծությունների նկատմամբ երկարատև կայուն շարժառիթավորում և իրենց ենթականերին ճիշտ դաստիարակելու կարողություն ձևավորելու տեսակետից, ընդգծված նշանակալիությամբ կարևորվում է ռազմակրթական բուհերում սոցիալ-մանկավարժական պատրաստման արդյունավետ համակարգի կայացումն ու մշտական արդիականացումը:

СОЦИАЛЬНО-ПЕДАГОГИЧЕСКАЯ ПОДГОТОВКА КУРСАНТОВ В ВОЕННО-ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ЗАВЕДЕНИЯХ КАК СОСТАВЛЯЮЩАЯ ТРАНСФОРМАЦИИ АРМИИ

А. В. ТАДЕВОСЯН, кандидат педагогических наук, доцент кафедры педагогики, советник ректора Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна

РЕЗЮМЕ

Успех трансформации армии во многом обусловлен доброжелательным отношением среды, в которой и через которую осуществляется эта трансформация, то есть, от степени сознательного вовлечения офицерского состава в оборонные реформы. При этом, офицеры

должны не только принимать необходимость реформ, но и выступать в качестве активных проводников идеи реформирования, обладающих способностями лидера, педагога, воспитателя. А это значит, что для обеспечения эффективности формирования офицерского состава, наделенного необходимыми личностными качествами, следует осуществить обстоятельное изучение социально-педагогической проблемы подготовки курсантов военного вуза МО РА; выявление имеющихся пробелов, задач, их причин; анализ сильных и слабых сторон социально-психологической и нормативно-правовой составляющих и т. д. Использование выработанных по результатам данного исследования предложений будет способствовать повышению применимости и полезности социально-педагогической и социально-психологической составляющих для обеспечения качества военного образования в целом и подготовки курсантов к офицерской службе, в частности, для повышения эффективности управления и руководства воинскими подразделениями в будущем.

Как с точки зрения наделения сегодняшних курсантов – будущих офицеров профессиональными знаниями и умениями, так и формирования длительной устойчивой мотивации к психическим новациям и умения правильно воспитывать своих подчиненных, с выраженной значимостью придается важное значение становлению и постоянной модернизации эффективной системы социально-педагогической подготовки в военно-образовательных вузах.

THE SOCIAL AND PEDAGOGICAL TRAINING OF CADETS AT THE MILITARY-EDUCATIONAL INSTITUTIONS AS A COMPONENT OF THE ARMY TRANSFORMATION

H. V. TADEVOSYAN, PhD in Pedagogy, Associate Professor, Chair of Pedagogy, Advisor to the Rector, Kh. Abovian Armenian State Pedagogical University

SUMMARY

The success of the Army transformation is predominantly stipulated by the benevolent attitude of the milieu in and through which that very transformation takes place, i.e., by the degree of the conscious engagement of the officer corps in the defense reforms. Meanwhile, the officers ought not only apprehend the necessity of the reforms, but also act as active proponents of the very idea of reforms, possessing leadership, teaching, and mentoring skills. This implies that in order to ensure the effective development of an officer corps displaying key personal qualities, a thorough study of the social and pedagogical problem

regarding the training of cadets at the MOD RA military higher education institution should be carried out; existing shortcomings, tasks and their causes should be identified; analysis of the strengths and weaknesses of the social and psychological, and regulatory components should be done, etc. Implementing this study-based recommendations will contribute to increasing the applicability and feasibility of the social and pedagogical, as well as social and psychological components for ensuring the quality of military education in general, and the training of cadets for commissioned service, in particular, so as to improve the efficiency of C2 in the military units in the future.

Both from the point of endowing today's cadets – the future officers – with professional competence and skills, and that of developing long-term, sustainable motivation for psychological innovations and the ability to properly educate their subordinates, the buildup and ongoing modernization of an effective system of social and pedagogical training in military-educational institutions is highly prioritized.